




ԱԶԱՏ ԽՕՄՓ

ՇԱԲԱԹ, 14 ՅՈՒԼԻՍ 1906, ԱԼԵԿՍԱՆԴՐԻԱ

ՈՃՐԱԴԱՏ ԱՏԵԱՆԻՆ ԱՌՋԵԻ



ՆԱԽԱԳԱՀԸ (Հայրական և յուզեալ շեշտով մը).-- Դատարանս քեզ մահուան կը դատապարտէ, իցի՛ւ թէ այս պատիժը դաս մը ըլլար քեզի համար, ապագային պարկեշտ մարդ մը դառնալու. . . :

ՀԻՆ ԾԱՆՈԹ ՄԸ

--է՛յ, ի՞նչ ջուրի մէջ ես...

Անցած օր այս ազազակը լսեցի ետեւէս կրք-զը-լուխս կախած կ'անցնէի Աթթարինէն:

Ետ դարձայ եւ գինետան մը անկիւնը թեւ մը նշմարեցի որ անընդհատ վեր վար կ'իջնէր, ինչ որ ամին լեզուի մէջ «հոս եկո՛ւր» կը նշանակէ:

Առաջացայ դէպի գինետուն եւ տեսայ որ այդ թեւը փակած էր մարմնոյ մը որուն վրայ գլուխ մը կը բարձրանար, մինչ ստորին մասը երկու ոտքերով կը վերջանար: Ան ատեն հասկցայ որ զիս կանչողը մարդ մըն էր ու աւելի մօտեցայ:

--է՛յ, ի՞նչ ջուրի մէջ ես, կրկնեց մարդը զուարթերես:

--Վա՛յ հաճի Գարբէլ, գոչեցի եւ համբուրուեցանք:

Հին ծանօթ մըն էր Հաճի Գարբէլը որուն հետքը կորսնցուցած էի երկու տարիէ ի վեր: Պոչիս զինքը ճանչնալէ ետքը, հետզհետէ իրեն պատահեր էի Աթէնք, Եգիպտոս, Բարիդ, Լոնտոն, վերջապէս քիչ մը ամէն կողմ ուր բախտը քառուչուէ գնդակի մը պէս նետեր էր զիս:

Արտաոող փիլիսոփայ մը այդ Հաճի Գարբէլը եւ միանգամայն կարող եւ պատկառելի խման մը որուն համար ոգելից ըմպելիները որ կը է գաղտնիք չունին: Խորաթափանց գիտող, յոռետես եւ ազատարան մարդ մը որ իր արձակած վճիռները թէ՛ իմաստասիրական, թէ՛ ընկերական եւ թէ՛ ոգելից ըմպելիներու մասին անվերաքննելի կը համարի եւ երբէք չկրնար ըմբռնել թէ ինչպէ՞ս կարելի է իր ըսածներուն չհամոզուել:

Հաճի Գարբէլ քառասուննոց մը կայ, կարճ, գեր,

Քս. շոր պեխերով, անմօրուս: Ամէն ինքզինքը շարզող
փիլիսոփայի պէս ամուրի է եւ իգական սեռին կա-
տաղի հակառակորդ՝ այն իմաստասէրին պէս որ ծա-
ռէն կախուած կին մը տեսնելով գոչեց.

--Իցի՛ւ թէ ամէն ծառ այսպիսի պտուղներ տար:
Այսչափը կարծեմ առ այժմ բաւական է անխոփ
զազափար մը տալու համար իմ վաղեմի բարեկամիս
կրայ:

Արդ, համբարուելէ ետքը երրորդ անգամ կը կնեց
ժր հարցումը.

--Ի՞նչ ջուրի մէջ ես:

Եւ անանց պատասխանին սպասելու ծառան կան-
չեց ու գարեջուր մը ապսպրեց ինծի համար:

--Ո՛ր էիր երկու տարիէ ի վեր, հարցուցի:

--Ի՞նչ կ'ըսես այս եղածներուն, պատասխանեց:

Գիտէի որ Հաճի Գաբրէլ երբ անգամ մը հար-
ցումիդ չպատասխաներ աւելորդ յոգնութիւն է զայն
կրկնելը: Ուստի աւելի ջարմար զատեցի որ ես իրեն
պատասխանեմ:

--Ո՛ր եղածներուն:

--Սա սահմանադրական պայքարին, Երեսփոխա-
նական Ժողովի ընտրութեան, եւն, եւն:

--Ի՞նչ ուրկէ՞ գիտես ստոնք:

--Աղբար տարի մըն է հոս եմ, ամէն բան կը
տեսնեմ, կը չսեմ, մանաւանդ որ այս խնդիրը շատ
հետաքրքրած է զիս:

--Կ'ըսեմ որ... կ'ըսեմ որ մեր սահմանադրական-
ներն են պատճառը ամէն բան ջուրը իյնալուն:

--Երիտասարդ, պատասխանեց Հաճի Գաբրէլ, ու-
րախութեամբ կը տեսնեմ որ կը սկսես կոր ուղիղ
զատել, եւ աշխարհի մէջ ատիկա կրնայ քեզ առաջ-
նորդել մեծամեծ սխալներ գործելու:

Այս խորունկ փիլիսոփայական վարկածին վրայ, Հաճի Գարբէլ պարպեց գարեջուրի գաւաթը եւ զախ երկու երեք անգամ սեղանին զարկաւ, ինչ որ գինետանց բառարաններուն մէջ «նորէն լեցուր» կը նշանակէ:

Ծառան եկաւ ու վերանորոգեց գաւաթները:

--Արդ, ըսաւ, հիմակ որ անոնց յանցաւոր ըլլալը կ'ընդունչս, ի՞նչ արժանի պատիժ պիտի անօրինէիր, եթէ ժողովուրդ ըլլայիր:

--Նոր ընտրութեան մը ատեն անոնց քուէ չպիտի տայի:

--Ատիկա բացասական պատիժ մըն է, իմ խօսքս դրական պատիժի մը վրայ է:

--Իրական պատիժ... ,

--Անչո՛ւշտ. ես եթէ ժողովուրդ ըլլայի այդ տասնեւութը նորընտիրները կը բռնէի, քուէարկութեան սրահը կը պտղեցնէի եւ իրենց ստացած քուէներուն թիւովը ոտքերնուն ֆայախանի հարուածներ կ'իջեցնէի...

Եւ Հաճի Գարբէլ, գոհ իր այս արտառոց գաղափարէն, քահ քահ մը ձգեց ու գարեջուրին գաւաթը պարպեց ի մի ումպ:

--Ի՞նչ ըսիր ասոր, հէ՞... .

--Լա՛ւ, պատասխանեցի, բայց այդ քու դրութեամբդ գուցէ անմեղներն ալ տուժեն. օրինակի համար Տ. Գառնիկ Չպուքճեանը որ ամէնէն աւելի քուէ առած է, ըստ քու վճիռիդ ամէնէն աւելի հարուած պիտի ուտէ եւ զիտենք թէ մէջերնէն ամէնէն անմեղն է:

--Վնաս չունի, գոչեց տարօրինակ մարդը, հաւաքական պատիժներու մէջ այդ տեսակ մանր անիրաւութիւններ կը պատահին:

Յետոյ խօսակցութեան նիւթը յանկարծ փոխելով, ինչ որ Հաճի Գարբէլի նկարագրին մէկ յատկանշանական մասը կը կազմէ, ըսաւ.

« Ի՞նչ պիտի ըսես սա համեմատականի քուէարկութեան օրուան ժամպոնին, սօսիսօնին, սալամիին, պանիրին, գինիին եւն:

« Ի՞նչ կը նշանակէ այդ նպարավաճառական ցուցադրութիւնը:

« Էֆէնտիմ, համեմատականի քուէարկութեան օրը քուէհամարի գործողութիւնները կ'երկարին, կէտորը կը հասնի, ամենուն փորը կ'անօթանայ կը տեսնեն որ տակաւին քանի մը ժամ ստիպուած են հոն մնալ, մէջերնէն մէկը ոսկի մը կը հանէ ծառայի մը կուտայ եւ կը պատուիրէ որ ուտելիք եւ գինի առնէ որպէսզի հոն մնացողները ուտեն եւ խմեն.

« Կեցցէ՛, ազնիւ հոգի, հոգածու սիրտ, պատասխանեցի:

« Վերջը մտիկ ըրէ, գոչեց Հաճի Գարբէլ, ուտելիքներ կուզան ու ներկաները կը նստին կ'ուտեն ու կը խմեն.

« Անոյ ըլլայ.

« Այո՛, անոյ ըլլայ, ինչպէս կ'ըսէր Չինացին իր բարեկամին որ սխալմամբ գաւաթ մը քէզապ կուլ տուած էր. բայց խնդիրը հոն չէ, գիտե՛ս ի՞նչ կը պատահի հետեւեալ օրը. ոսկին տուող պարոնը կը ներկայանայ Աղքատախնամի քարտուղար պ. Նշան Ամատունիի եւ զրամը կը պահանջէ, ըսելով որ Առաջնորդարի պարտականութիւնն էր զիրենք կերակրելու Պ. Նշան ոսկի մը կուտայ, զոր կանցնէ Աղքատախնամի հաշիւին. . .

Հաճի Գարբէլ գաւաթը պարպեց եւ պատմութիւնը շարունակեց.

— Ամառը գլխին, պ. Նշան Ամառունի Ազքատա-
խնամի հաշիւը կը ներկայայնէ փաշային՝ որ բաշար-
ձախապէս կը մերժէ ընդունել այդ մէկ սալիք ծախսը,
այնպէս որ հրմակ խեղճ պ. Նշան Ամառունին է որ
ազգասիրարար կերակրած է նոյն օրունն բուէհամա-
րի քննիչները:

— Դժուարին կաշու թիւն արգարե...

— Այո՛, գժուարին կաշու թիւն, ինչպէս իրտամբ
կը խորհէր կոյրը որ չտեսնելով վեց հարիւր մէդր խս-
րութեամբ հոր մը ինկած էր:

Հաճի Գարբէլ լոց, չարածիտ ակնարկ մը ուղ-
ղելով ինծի:

— Ուրիշ իրողութիւն մըն ալ չիմացա՞ր, հարցու-
ցի նոյնքան չարածիտ ակնարկով մը:

— Ի՞նչ, բառ Հաճի Գարբէլ հետաքրքրութեամբ:

— Անցեալները Բարթող բաշան օթեակի տրմակ
մը կ'ընդունի կարմիր Խաչի Տիկնանց Ընկերութենէն,
տոմսակը չվերադարձներ, ներկայացումը կը տրուի եւ
տիկնանները գիմում կ'ընեն փաշային տոմսակին փո-
խարժէքը պահանջելու համար: Փաշան պատասխան
կուտայ թէ ինք տեղեկութեան չունի եւ թէ հարկ է
Տ. Մ. Թելեանի գիմելը: Կը գիմուի Տ. Ս. Թելեանի
որ կը պատասխանէ թէ ինք տեղեկութիւն չունի եւ
թէ հարկ է ուղղակի փաշային գիմելը: Փաշային կ'եր-
թան որ գիրծնք Թելեանին կը զրկէ եւ այսպէս փո-
խարժարար, ու այս կը տեսէ մինչեւ այսօր,

— Անվայել բան, բայց սա ժամպօ՞նը...

— Պէտք չէր որ ըլլար, բայց սա տոմսա՞կը...

— Մնաք բարով:

— Երթաք բարով:

Բաժնուեցանք իրարմէ, կրկին տեսնուելու խոս-
տումով:

ԲԱՅ ՆԱՄԱԿ ԱՆ ԱՒՆ

„Լուսաբեր“ից 237 թիւին Ընդհարում մի վտանգը խորագրով առաջնորդողը կարգացի :

Հայ ժողովուրդին քիչ շատ զարգացած դասակարգին մէջ կայ սառուար մաս մը որ ամէն ատեն որ և է տպուած թուղթի վրայ երբ Ձեր ստորագրութիւնը կը տեսնէ, մօժ ախորժ ու հաճոյքով կը կարդայ զայն: Ես ալ ուղղակի այդ դասակարգին կը պատկանիմ միայն սա տարբերութեամբ, որ երբ գրածիդ մէջ ոճիդ ու գրչիդ համապատասխան է նաև յայտնած միտքդ, այսինքն՝ իրաւ ու ճշմարիտ ըլլայ ոչ թէ կը կարգամ այլ կը լափեմ: Բայց հակառակ պարագային, երբ գրածիդ մէջ ճիշդ մը կը տեսնեմ երբեմն սեւ ճերմակ կամ ճերմակը սև ջուցագրելու և կամ կարգացողին վրայ ազդելու համար ալ բիրէները տէ՛վ է շինելու, այն ատեն ա՛լ կը գայթակղիմ և առաջին քննադատող և հակառակողը ըլլալ կուզեմ. և նոյնիսկ գիտնալով հանդերձ որ քեզի դէմ բանակը ունելու համար պէտք եղած շնորհքը կամ պատշաճ զէնքերը չունիմ, այսու ամենայնիւ ես ալ իմ ծուռիկ մուռիկ հաստ սօփաս կ'առնեմ ու տանկուլ տունկուլ դէմդ կ'ելլեմ և հաւաստիկ:

Անցեալ օր երբ «Լուսաբեր»ը ձեռք առի (բաժանորդ չեմ. բայց ամէն առան կը կարգամ) մէկէնիմէկ սխալմամբ ընդհարումի վտանգը՝ ընդհանուրին վտանգը կարգացի, որովհետեւ ակնոցս քիթիս չէի անցուցած, և ի՞նչ մեղքս պահեմ, յանկարծ ժանտախտը միտքս եկաւ և յուսահատութիւն տիրեց վրաս, մտածելով թէ ի՞նչ պիտի ըլլար վիճակնիս, երբ այս շունչանորդի հիւանդութիւնը արձակ համարձակ ճարակ գտնէր ամէն կողմ: Ուրիշ հայ մը որ ճիշտ քովս նստած էր, տեսնելով այս վիճակս աւելի յուսահատեցուց զիս. Ձէ աղբար՝ ըսաւ, ինչդիրը ժանտախտին վրայ չէ. հապա՞ ընդհարում, պատերազմ, կռիւ կայ եղեր. Իսկէնտէրէին հայերը ու Գում-Գարուի հայերը կռիւի սկսեր են. այս կռիւին երեսէն պատրիարքարանը կործաներ է, Էջմիածինը ցըրելի ցրելի եղեր է, Սուլթանը ու Չարը իրար անցեր են, Խտիվը մէջ է մտեր, Ֆրանսան, Անգլիան ինչ ընելիքնին շաշըմիշ ըրեր են. Իտալիան ալ նորէն մըսթըր Ռուզվէլթին դիմեր է որպէսզի այս կործանումներուն ու ջախջախումներուն առաջըր առնելու համար միջամտէ. վերջապէս կացութիւնը շատ դէշ է եղեր... Խենթ է մտածեցի այս մարդը և ակնոցս անցունելով սկսայ ուշի ուշով կարդալ ընդհարումի վտանգը, հասկնալու համար թէ իսկապէս ի՞նչ է իրն-

դիրը. կարդացի պ. Արփիար և երեք անգամ
կարդացի. դիտէ՛ք ինչ տպաւորութիւն գործեց
վրաս Ձեր դրածը: Նախ կարծեցի թէ Օրման-
եան պատրիարքը այս խնդրոյն պաշտպանու-
թեան հոգը իբրև փաստաբան Ձեզի յանձներ
է և դուք ալ իբրև պարտականութիւն Ձեր ար-
հեստը ի գործ կը դնէք առած վարձքերնուդ
փոխարէն. ո՛չ ապաքէն ամենէն մեծ ոճրա-
գործներն անգամ փաստաբաններու կը յանձ-
նուին պաշտպանուելու համար և երբեմն պա-
տահած է ալ որ իրօք մարդասպան մը իր փա-
տաբանին շնորհիւ իբրև անպարտ արձակուած
է, բայց այս պարագային այնպէս չեմ կարծեր
ո՛ր ըլլայ. որովհետև նախ՝ դատապարտեալ ամ-
ենապատիւը ս ա պ ը ք ա լ ը է և թէ մէջ նետ-
ուած փաստերն ալ Պօլիսէն եկած Ֆիչնէներէն
աւելի չիւրիւկ ու փտտած են: Հիմա սիրելի Ար-
փիար, ինչի մտիկ ըրէ ես երկու խօսքով ամէն
բան վերջացնեմ: Ալեքսանդրիոյ հայ գաղթա-
կանութիւնը՝ երկար ժամանակէ ի վեր իր իրա-
ւանց բռնաբարումը տեսնելով, միանգամ ընդ-
միշտ Օրմանեան պատրիարքարանի կամայակա-
նութենէն ու անոր ստեղծած բռնակալութենէն
ազատուելու համար, ազգ. իշխանութիւն մը
ունենալու պէտքը տեսեր և ընտրական սկզբ-
բունքի հիման վրայ Երեսփոխանական Ժողովի
ընտրութիւնը յարմար դատեր ու օրինաւոր և

միաբան քուէալութիւնով իր կամքը արտայայտեր ու լմնցուցեր է:

Այլեքսանդրոյ հայ ժողովուրդին այս պարզ ու անվիճելի իրաւունքին գոծադրութիւնը, ո՛չ է. Պոլսոյ Պատրիարքարանի կարծեցեալ կամ երևակայական առանձնաշնորհումներուն վտանգ կ'սպառնայ, ո՛չ էջմիածնի իրաւասութեան ենթադրուելու կամ Նիքոլա Չարին միջամտութեան հարկ կը թողու, ոչ երկրորդ առաջնորդի մը պէտքը և Սուլթանին պէրաթին տեղի կուտայ, ո՛չ Խտիվին և Լօրտ Քրօմբրին անհանգստութիւն կը պատճառէ ո՛չ Գահիրէի հետ անշատման կամ միացման պէտք կ'ստեղծէ կամ կ'ենթադրէ եւ ո՛չ ալ մնացեալ կառավարութիւններուն նաւատորմիդները շարժուն վիճակի մէջ դնելու պէտքը զգալի կ'ընէ, միայն և միմիայն Նորին Վսեմութիւն Բարթող փաշային սրտին կը դպչի, հետեւաբար և Օրմանեան պատրիարքին:

Աւտտի եթէ իրապէս Օրմանեան Պատրիարքարանը միտքը դրած է ամէն գնով ժողովուրդին արգար կամքը ոտնակոխ ընել Բարթող փաշայի խաթերը համար զանազան անտեղի պատրուակներով ինչպէս ըրած է մինչեւ ցարգ, այն ատեն իրաւ է որ վտանգ կայ բայց ոչ թէ ընդհարումի, այլ ուրիշ տեսակ և վերջին արհամարանքի մը որուն իրաւամբ պիտի արժանանան եթէ յարատեւեն:

Հիմայ մեր բուն կարծիքի մասին տեղեկութիւն տամ ի մասին Աղեքսանդրիոյ ընտրական եղանակին:

Ինչպէս որ դիտէք Աղեքսանդրիոյ հայ գաղթականութիւնը ի վաղուց անտի բացառիկ կարեւորութիւն մը ստացած է յաչս տեղական կառավարութեան և օտարաց իր անուանի և հոյակապ ազգապետներու շնորհիւ և անոնց ձեռք բերած մասնաւոր ու բացառիկ առանձնաշնորհմանց զօրութեամբ. այնպէս որ կրնամ ըսել թէ եգիպտոսի ազգ. իշխանութիւնը աւելի կարեւորութիւն յարգ ու պատիւ ունի կառավարութեան մօտ քան Կ. Պոլսոյ Պատրիարքարանի ազգ. իշխանութիւնը: Հետեւաբար մեր ունենալիք ազգ. իշխանութիւնը պարզապէս Պոլսոյ Թօփ Գաբուի կամ Եէնի Գաբուի թաղերուն հետ չենք կրնար համեմատել որ պարզ Բանկալճի թաղական Խորհուրդ մը ընտրենք, այլ ամենէն օրինաւորը Քաղ. Ժողովի կազմութիւնն է իր ուսորադաս հոգաբարձութիւններով կամ Խորհուրդներով: Ահա այս նկատումներով էր որ Աղեքսանդրիոյ Ժողովուրդը այնպիսի երեսփոխանութիւն մը ընտրեց որ ոչ միայն իր վրայ դրուած յոյսը իրականացուց այլ նոյն իսկ օտարներուն զարմանք պատճառեց իր օրինակելի գիտակցութեամբ ու քաղաքացիական պարտաճանաչութեամբ:

ՎԵՐՁԻՆ ԽՕՍԻ

Ազգքսանդրիոյ Երեսփոխանութիւնը ի հարկի՛ր առաջնորդի ընտրութեան կամ ուրիշ հանրային խնդիրներու տառն կրնայ միաբան գործակցել Նահէրէի Ազգ. Երես. ժողովին հետ բայց իր գործերուն տէրը և համարառուն ինք մնալու պայմանաւ ինչպէս եղած է 50 տարիէ ի վեր, որ այն ատենները գեռ պահքի օրերը գէթ ինը համով ըլլալուն համար իբրև խաւեար ուտելը մեղք կը համարուէր, և ըստըրիտեա ուտողները ֆալախանի կը քաշէին. բայց այդ օրերը այլեւս անցած են և չեն դառնար:

ԵՐԿՈՒ ԽՕՍԻ ԱՆ ՄԵՐ ԵՐԵՍՓՈՒՄԱՆ
ԷՖԷՆՏԻՆԵՐՈՒՆ

Ազգքսանդրիոյ հայ ժողովուրդը կը հաւատայ և կը յուսայ որ իր ընտրած Երեսփոխաններէն ոմանք՝ որ զանազան պարագաներու տակ ներկայ վիճակին պատճառ դարձան, քիչ մը զիրենք ընտրող ժողովուրդէն աւելի հեռատեսութիւն ու խելքը կ'ունենան ամէն բան իրենց մէջ կարգադրելով համաձայնելու եւ տեղական ամէն կարգի ազգ. խնդիրները օրինաւորապէս լուծելու մասին իրենց ջանքերը կը փութացնեն յօգուտ Եգիպտոսի հայ գաղթականութեան եւ ի խնդակցութիւն համօրէն ազգիս:

Բ. Բ.

ԻՐՄԷ ԱՒԵԼԻ ՃԱՐՊԻԿ

Ինչպէս յայտնի է, անցած ուրբաթ օր Տօբթ. 4. Փաշայեան Խան ուսական Չահաչէֆ շողե- նաւով Ալեքսանդրիայէն մեկնեցաւ դէպի Բիրէ, անկէ Սև Մովսէս ճամբով Պարսկաստան ելլա- լու համար ք

Արդ, այս առաւօտ հասած մասնաւոր նա- մակէ մը կը տեղեկանանք թէ Աթէնքի մէջ, յոյն քսակահատ մը մեր մեծ բարեկամին 25 ոսկին գողցել է. Խեղճ գոկտոր, եթէ զեղջենք հիմակ գողցուած գումարը համբաւաւոր 40 ու- կիէն՝ ի՞նչ կը մնայ քեզ. . . ըլլալ:

ՑԱՒԱԼԻ ԼՈՒՐ ՄԸ

Սյո առաւօտ 4. Պօսէն մասնաւոր անձի մը եկած նամակ մը խիստ ծանրակշիռ լուր մը կը բերէ:

4. Պոլսոյ հայ մամուլին ներկայացուցիչներէն պ. Տիգրան Արփիարեան՝ Մատիս շարաթաթերթի խմբագրապետը, պ. Բիւզանդ Բէչեան՝ Բիւզան- դիոն օրաթերթի խմբագրապետը, պ. Յովհան- նէս Ֆէրիտ Գայսէրլեան՝ Մանգումէ օրաթեր- թին արտօնատէրը, պ. Բասիմ (Միտակ Բօշուն- եան) Մանգումէի խմբագրապետը՝ պ. Չայրմայր (Կէօջիւրեան) Սուրհանդակ օրաթերթին խմբա-

գիրը, պ. Զարեհ Եուսուֆեան՝ Արևելք օրաթերթին տնօրէնը, պ. Պապիկեան և Աւետաբեր թերթին տնօրէնը շաբաթէ մը ի վեր բանտարկուած են և հաղորդակցութենէ արգելուած:

Շատ մը երևակայական ամբաստանութիւններ կը ծանրանան իրենց վրայ, ի մասնաւորի՝ արտասահմանի յեղափոխական մարմիններու հետ հաղորդակցութիւն և ի միջի այլոց, Ալեքսանդրիոյ վերջին Գաւառական Երեսփոխանական Ժողովի ընտրութեան ծանուցումին մէջ Տ. Միհրան Տամատեանի անուան յիշատակութիւնը:

Այս օրերս արդէն Հայերու ձերբակալութիւնները կրկին շատցած են և նամակագիրը ասոր պատճառ ցոյց կուտայ ծանօթ յեղափոխական գործիչի մը վերջերս Պօլիս հասնիլը:

ԹԵՐԹԻԿ ՕՐԱԹԵՐԹԸ

Ինչպէս ծանուցած էինք չորեքշաբթի օրուրնէ սկսեալ Ալեքսանդրիոյ մէջ սկսաւ հրատարակուիլ Թերթիկ օրաթերթը որուն գտած ընդունելութիւնը և ամէն կողմէ յայտնուած փափաքները մեզ կը ստիպեն թերթին ծաւալը մնդարձակել նոյն գինը պահելով: Այս նոր կարգադրութիւններուն պատճառաւ Թերթիկի յառաջիկայ թիւը հաւանօրէն չորեքշաբթի օրէն

առաջ հրապարակ պիտի չկենայ ելլել: Այս նոր
գոհողութիւնն ալ որ կ'ընենք ժողովրդեան պա-
հանջումներուն գոհացում տալու համար կրկին
փորձ մըն է և Թե՛րթիկի գոյութիւնը այն ա-
տեն պիտի ապահովուի երբ ընթերցող հասա-
քակութիւնը գիտնայ զնահատել մեր շանքերը:

«ԱԶԱՏ ԽՕՄԲ», Ձեռքի ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻ

Ալեքսանդրիա՝ Տ. Յ. Ղազիկեանի քով և Շէրիֆ
Փաշա լրագրավաճառ Տ. Թեղալեանի խանութը:
Գահիրէ՝ լրագրավաճառ Տ. Հունկի և Կոլտըն Բէտչ-
քի քով և «Լուսարեր» թերթի ցրուիչին ծօտ:
Նախորդ շաբթուան թիւերը կը վաճառուին կըր-
կին գինով:

New Victoria Hotel ՍԱՆ ՍԹԷՖԱՆՕ

ՆՈՐ ՎԻԲԹՈՌՈՒԻԱ ՕԹԷԼ Ազեքսանդրիոյ Մօտ
ՅՈՒՆԻՍԻ ՄԷՋ ԲԱՑՈՒԱՆ Հալթ թիւ 2

Առաջին կարգի օթելը մասնաւորապէս շինուած,
այժմու բոլոր հանդատաւէտութեան պայմաններով:
Հիանալի ճաշարան, սալօն, ծխարան: Մասնաւոր
ճաշարան: Ընդարձակ պատշգամ և պարտէզ: Ելքաը-
րական լոյս: ՉԱՓԱՒՈՐ ԳԻՆ: Թերեֆօն թիւ 370: Հե-
ռագրական հասցէ՝ Նիւ Վիքթորիա, Ռամֆէ: Թոսամվա-
յով տասը վայրկեան Ալեքսանդրիայէն:

Ս. Ֆ. ՌէՉիկ, ՏԵՕՐԷՆ

Յ. Գ.--Մասնաւոր գին կառավարական պաշտօն-
աններու և զինուորականներու համար: Բոլոր սին-
եակները ծովուն վրայ կը նային:

“ ԱԶԱՅ ԽՕՍՔ ”, Ի Պայտանները

- ԱԶԱՅ ԽՕՍՔ - ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԾԱԲԱԹ ՕՂԵՐԸ
Եզիպտոսի համար բաժնեզինն է

40 ԹԻԻԸ 40 ՂՐԾ. ՈՂՋ

20 ” 20 ” ”

Ա Ր Տ Ա Ս Ս . Հ Մ Ա Ն

ԵՒՐՈՊԱ 40 ԹԻԻ 10 ՖՐԱՆՔ

ՌՈՒՍԻ ” ” 4 ՐՈՒՊԼԻ

ԱՄԵՐԻԿԱ ” ” 2 ՏՈԼԱՐ

Բաժանորդագրուրիւնը կաճիսիկ

ՀԱՏԸ 1 ՂՐԾ. ՈՂՋ

“ ԱԶԱՅ ԽՕՍՔ ”, Ի համար բաժնեզին կա՛
որ և է գրութիւն պէտք է ուզղել հե-
տեւայ հասցէին՝

K. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE, (EGYPTE)

Ծանուցումներ կրկնուումին մասնաւոր
պայտաններով:

Պատասխանատու . Խժբագիր Ե. ՕՏԵԱՆ

Տպգր. Փոքր. Գ ՆԱԶԱՐԷԹԵԱՆ Ալեքսանդրիա